ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » դեկտեմբերի 2021 թվականի N: 400-Ա ք.Գյումրի

ՀԱԿՈԲ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հակոբ Գևորգյանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հակոբ Գևորգյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021 թվականի դեկտեմբերի 13-ից մինչև 2022 թվականի հունվարի 18-ը ներառյալ:
2. Հակոբ Գևորգյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Աննա Հարությունյանին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է